ՍԵՐՈՎԲԷ ՁՈՊԱՆՈՎ, եղբայրները ԱՑՏԻՆ ԴԱՍՊԱՐ, ՊԱՂՏԱՍԱՐ և ՇԱՀԷ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆՑԻ. (Մեծ Սալա գիւղէն). — 2000 լուբլի ծախքով 1908ին շինել կուտան Գեղեսեմանի պարտէզին հայոց բաժնին երկաթեայ վանդակապատը և կ'ստանան Օրհնութեան կոնդակ Յարութիւն պատրիարքէն։

ՍԵՐՈՎԲԷ ՎՐԴ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆ, ԹԱԼԱՍՑԻ.— Մբ. Ծ. 1871 ին. Զա. 1898ին, ՏԴ. (1902—4). ՏՑՊ. 1907ին. Տեսուչ Ժառ. Վարժ.ի. 1910ին, ՏԲ. 1914ին. կը վախճանի 27 Հոկտ. 1917։ Ցիշեալը վարած է նաև Տրապիզոնի և Պաղտատի առաջնորդական պաշտօնները (1904—7). ունի հրատարակութիւն մը Ծրագիր կենաց անուամբ (տպ. Պոլիս, 1904)։

ՍԵՐՈՎԲԷ ՎԻՉԷՆԵԱՆ (Տfp. Սերվիչեան), ՊՈԼՍԵՑԻ.— Ծ. 1815 Պոլիս. աշկ. Սկիւտարի Եէնի Մահալէի թաղային դպրոցին և ապա ֆրանսերէն սորվելով Եզիկեանէ՝ 1834ին Բարիզ կ'ուղևորի բժշկութիւն ուսանելու համար, չրջանաւարտ կ'ըլլայ 1840ին։ 1844ին կը հրատարակէ Մանկաստածութիւն անուն գիրքը. 1860ին իբր ֆինիչ—պատուիրակ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը որոշմամբ ազգ. պատրիարքարանի։ Հանրածանօթ դէմք մը եղած է պետական և գիտնական չրջանակներու մէջ և երկար ժամանակ մասնակցած է պատրիարքարանի ժողովներուն։ Կը վախճանի 1897ին (Սաւալան, էջ 1351). տեսնել իր ընդարձակ կենսագրութիւնը (Հա. 1893, էջ332—338)։

ՍԻՄԷՈՆ ԱԲ.— Մբ. 1606ին։

ՍԻՄԷՈՆ ԵՊՍ. ՆՋԵՑԻ (Սասուն). — Մբ. քահանայական ցեղէ, Երուսաղէմ գալով՝ կ'աշակերտի Թէոդորոս պտրք.ին, որ 1752ին Ս. Յարութեան տաճարին Գիւտ խաչ եկեղեցիին մէջ, վրդ. կը ձեռնադրէ զայն, տալով նաև ծայրագոյն վարդապետութեան աստիճան. և մասնաւոր ծառայութեանը համար կը շնորհէ անոր մասանի և խալիչէ, եւ իրաւունք Աբոռ նստելու, եւ դաս ասելու. Թէոդորոս պտրք. իր կոնդակին մէջ կը գրէ հետևեալ գնահատական տողերը Սիմէոնի մասին. «Ժառանգէր զանբիծ վարս և զմաքուր կրօնն եւ զբարի պաշտօնն առ Աստ. եւ զգիտութիւնն աստուածային սուրբ գրոց, Հին և Նոր Կտակարանաց և զբանիբուն հմտութիւն գրոցն արտաքնոց իմաստասիրականաց՝ ներհուն և հմտավարժ ի մանկութենէ հետայն, սնեալ և վարժեալ